ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2023թ. մայիսի 12-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրայելյան	Կոմիտեի անդամ

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **30.04.2023թ.-ի «Ալաշկերտ-աղջիկներ»-«Գանձասար-Վեդի» (ԿԱԽ2-036) խաղին «Գանձասար-Վեդի» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար-Վեդի» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով:

2. **29.04.2023թ.-ի «Հայասա»-«Լեռնային Արցախ-աղջիկներ» (ԿԲԽ-026) խաղին «Լեռնային Արցախ-աղջիկներ» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով:

3. **06.05.2023թ.-ի «Սարդարապատ-աղջիկներ»-«Բենտոնիտ-Ազատամուտ» (ԿԱԽ2-038) խաղին «Սարդարապատ-աղջիկներ» թիմի կողմից «Նոա ՖԱ» ՀԿ-ում գրանցված ֆուտբոլիստ Մարիամ Բարսեղյանին (46784) խաղացնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Սարդարապատ-աղջիկներ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 35-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Սարդարապատ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

4. **22.04.2023թ.-ի «Արարատ-2-07»–«Կիլիկիա-07» (16Բ-047) խաղին «Կիլիկիա-07» թիմի կողմից որակազրկված ֆուտբոլիստ Գառնիկ Բաղդասարյանին (42291) խաղացնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կիլիկա-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 37-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Երանոսի N1 միջ. դպրոց»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

5. **04.05.2023թ.-ի «Գանձասար»–«Սյունիք» (ԱԽ164) խաղին «Գանձասար» թիմի կողմից ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 2022/23 թթ. 30-րդ հոդվածի 11-րդ կետը (խաղադաշտում միաժամանակ գտնվել են ՀՀ-ում չմարզված /ՀՀ տարբեր տարիքային հավաքականներ չհրավիրված 6 ֆուտբոլիստներ) խախտելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 30-րդ հոդվածի 11-րդ կետը՝ «Գանձասար» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:

6. **03.05.2023թ.-ի «ՈՒրարտու-05»-«Անդրանիկ ՖԱ-05» (18A-039) խաղին «Անդրանիկ ՖԱ-05» թիմի մարզիչ Նարեկ Դավթյանի կողմից մրցավարի (5205) օգնականի հետ վիճավբանելը, վիրավորական արտահայտություններ անելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Անդրանիկ ՖԱ-05» թիմի մարզիչ Նարեկ Դավթյանի (5205) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 29-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև ս/թ մայիսի 31-ը և «Անդրանիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

7. **02.05.2023թ.-ի «Ուրարտու-2-13»-«Ուրարտու-1-13» (10U1-040) խաղին երկու թիմերի ծնողների միջև վիճաբանությունը և դաշտի տեր թիմի անվտանգության աշխատակիցների թերի աշխատանք կատարելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 31-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

8. **30.04.2023թ.-ի «ՈՒրարտու-2-10»-«Էրեբունի-10» (13U1-065) խաղին «Էրեբունի-10» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Էրեբունի-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Հ.Խաչատրյանի անվ մ/պ հմ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

9. **30.04.2023թ.-ի «Ալաշկերտ-07»-«Բերդավան-07» (16C1-049) խաղին «Բերդավան-07» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Բերդավան-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Բերդավանի գ/պետ-ն»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

10. **04.05.2023թ.-ի «Գանձասար»-«Սյունիք» (ԱԽ-164) խաղին «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Առաքելյանի (12445) կողմից անհասցե հայհոյանքներ հնչեցնելը,**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Առաքելյանի (12445) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 1 խաղով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

11. 10.05.2023թ.-ի «Սյունիք-07» «Գանձասար Երևան-07» (16A-014) խաղին «Գանձասար Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Պավել Ասիլյանի (29134) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Գանձասար Երևան-07» թիմի ֆուտբոլիստ Պավել Ասիլյանի (29134) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 1 խաղով և «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

12. 09.05.2023թ.-ի «Ալաշկերտ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ-172) խաղին 1)«Ալաշկերտ-2» թիմի կողմից չհայտավորված ֆուտբոլիստ խաղացնելը, 2) «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Արթուր Օրդինյանի (33616) կողմից անհամաձայնություն հայտնելը մրցավարի կայացրած որոշումների նկատմամբ և վիրավորական արտահայտություններ հնչեցնելը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ալաշկերտ-02» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 63-րդ կետը՝ թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ հանդիպման հաշիվը թողնելով նույնը՝ 2:7 և «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ալաշկերտ-02» թիմի ֆուտբոլիստ Արթուր Օրդինյանի (33616) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ վերջինիս որակազրկել մինչև ս/թ մայիսի 25-ը և «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

13. 08.05.2023թ.-ի «Նոա-11»-«Շիրակ-12» (12Մ5-043) խաղին «Նոա-11» թիմի չներկայանալը

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Նոա-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Նոա ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

14. **09.05.2023թ.-ի «Ակադեմիա-1-14»-«Շիրակ-2-14» (8Մ3-043) խաղին 1)«Շիրակ-2-14» թիմի մարզիչ Հարություն Ասլամազովի (467) կողմից մրցավարին վիրավորելը 2) «Շիրակ-2-14» թիմի մարզիչի հեռացման հետևանքով խաղն անավարտ թողնելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Շիրակ-2-14» թիմի մարզիչ Հարություն Ասլամազովի (467) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից մինչև ս/թ մայիսի 24-ը և «Շիրակ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Շիրակ-2-14» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ» ՀԿ-ի տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10,000 ՀՀ դրամի չափով:

15. **05.05.2023թ.-ի «Էրեբունի-08»-«Արարատ-08» (15Բ-068) խաղին «Էրեբունի-08» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Դհերյանի (32601) և «Արարատ-08» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Կարապետյանի (32796) ոչ մարզական վարքագիծը և վիրավորական արտահայտություններ անելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Էրեբունի-08» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Դհերյանի (32601) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Հ.Խաչատրյանի անվ մ/պ հմ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Արարատ-08» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Կարապետյանի (32796) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Արարատ ՖԱ» ՀՁ ՓԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

16. **06.05.2023թ.-ի «Արարատի-Արաքս-08»-«Նորք-08» (15Շ2-047) խաղին «Արարատի-Արաքս-08» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատի-Արաքս-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 20-րդ կետը՝ «Արարատի Արաքս ՖԱ»-ին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

17. **07.05.2023թ.-ի «Ֆալկոնս»-«Աջափնյակ Երևան» (ՍՖԱՓ-002) խաղին «Աջափնյակ Երևան» թիմի ֆուտբոլիստ Վանուշ Հակոբյանի (3950) կողմից խաղը սպասարկող անձնակազմի հասցեին վիրավորական արտահայտություններ և հայհոյանքներ թույլ տալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Աջափնյակ Երևան» թիմի ֆուտբոլիստ Վանուշ Հակոբյանի (3950) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 51-րդ հոդվածի 13-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Ժոզեֆ Շանելյան» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

18. **11.05.2023թ.-ի «Փյունիկ-1-11»-«Արարատ-Արմենիա-10» (13Մ4-066) խաղին «Արարատ-Արմենիա-10» թիմի ֆուտբոլիստ Գոռ Եփրեմյանի (35937) կողմից մրցակցին հարվածելը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-10» թիմի ֆուտբոլիստ Գոռ Եփրեմյանի (35937) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ վերջինիս որակազրկել 2 խաղով և «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով:

19. **10.05.2023թ.-ի «Նիգ-Արագած-13»-«Կարբի-13» (10Մ4-016) խաղին «Կարբի-13» թիմի չներկայանալը**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Կարբի-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետը՝ «Կարբի հ/պետարան»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5,000 ՀՀ դրամի չափով: